ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

2026-2027 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Հայաստանի պատմություն/Հայոց պատմություն:
Պետական ավարտական և միասնական քննությունների ուղեցույց:
Գնահատման և թեստավորման կենտրոն, 2026:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3

Թեստի կառուցվածքը 4

Առաջադրանքների տիպերը 4

Առաջադրանքների կառուցվածքային տեսակները և գնահատման չափանիշները 5

Առաջադրանքների նմուշներ 8

Քննական ծրագրում ընդգրկված ուսումնական նյութերը 17

Պատասխանների ձևաթուղթ 24

Գրականության ցանկ 25

ՆԱԽԱԲԱՆ

Ուղեցույցում ներկայացված են 2026-2027 ուսումնական տարվա պետական ավարտական և միասնական քննությունների թեստի կառուցվածքը, առաջադրանքների տիպերն ու կառուցվածքային տեսակները, առաջադրանքների լուծման եղանակների և պատասխանների ձևաթղթում լրացման կարգի բացատրություններ, առաջադրանքների նմուշներ, պատասխանների գնահատման չափանիշները, քննական ծրագրում ընդգրկված ուսումնական նյութերը և գրականության ցանկը:

Պետական ավարտական և միասնական քննությունների թեստերը մշակվում են ուղեցույցով տրված սկզբունքներին, պահանջներին և չափանիշներին համապատասխան:

Առաջադրանքները ստեղծվելու են գրականության ցանկում տրված դասագրքերի քննական ուսումնական նյութերի հիման վրա: Բողոքարկման դեպքում հիմք են ծառայում միայն 2018 թ. և 2019 թ. լույս տեսած դասագրքերը: Գրականության ցանկում տրված դասագրքերից բացի այլ գրականության, տեսակետներին և մեկնաբանություններին հղումները բողոքարկման համար հիմք չեն կարող հանդիսանալ:

Քննական թեստերը կազմվելու են քննական ծրագրում ընդգրկված՝ գրականության ցանկում տրված դասագրքերի համապատասխան ուսումնական նյութերի հիման վրա ստեղծված առաջադրանքներից: **Քննական ուսումնական նյութեր են հանդիսանում քննական ծրագրին համապատասխանող կամ վերաբերող՝**

1. բաժինների, գլուխների/թեմաների, պարագրաֆների կամ ենթապարագրաֆների վերնագրերը,
2. դասագրքերի ներածությունները, բաժիններում, գլուխներում/թեմաներում, պարագրաֆներում կամ ենթապարագրաֆներում եղած ներածական և հիմնական հեղինակային տեքստերը,
3. տարբեր խորագրերի տակ կամ առանց խորագրի տրված աղբյուրագիտական, մասնագիտական կամ հանրամատչելի տեքստերը և մեջբերված հատվածները՝ անկախ նրանից, թե գլխի կամ պարագրաֆի ո՛ր մասում են դրանք տեղադրված:

Առաջադրանքները կազմելիս օգտագործվելու են քննական ծրագրով տրված երկու տարբեր հեղինակային խմբերի դասագրքերի այն փաստերը, նկարագրությունները, մեկնաբանությունները, տեսակետները, խորագրով կամ առանց խորագրի տրված բազմաթիվ նյութերը և այլն, որոնք կան երկու հեղինակային խմբերի դասագրքերում ու միմյանց չեն հակասում, և դրանք չեն կարող տարակարծության տեղիք տալ: Թվարկված քննական ուսումնական նյութերը այդ դասագրքերում կարող են ունենալ տարբեր վերնագրային ձևակերպումներ, սակայն պետք է համապատասխանեն քննական ծրագրում տրված բաժինների, գլուխների/թեմաների, պարագրաֆների կամ ենթապարագրաֆների վերնագրերի ներքո տրված բովանդակությանը:

Հարգելի՛ շրջանավարտներ և դիմորդներ

Քննությանը նախապատրաստվելիս կարևոր է ոչ միայն փաստերի, տերմինների, հասկացությունների և երևույթների իմացությունն ապահովելը: Հանրակրթության պետական չափորոշչի համաձայն՝ կարևորվում է նաև պատմական փաստերը, երևույթները վերլուծելու, համադրելու, համեմատելու, պատճառահետևանքային կապերը վերլուծելու, պնդումների կամ փաստարկների ճիշտ կամ սխալ լինելը վերհանելու և տրամաբանական հետևություններ անելու ձեր հմտությունները դրսևորելը:

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Միասնական քննության թեստը բաղկացած է Ա և Բ մակարդակներից, ներառում է 70 առաջադրանք:

Թեստային առաջադրանքներն ունեն հետևյալ 3 կառուցվածքային տեսակները՝ ընտրովի պատասխանով առաջադրանք, կարճ պատասխանով առաջադրանք և պնդումների փունջ:

Ա մակարդակը վերաբերում է պետական ավարտական և միասնական քննության պետական ավարտական մասին: Այն կազմված է 45 առաջադրանքից (հ. 1-45): Դրանցից ընտրովի պատասխանով են հ. 1-34 առաջադրանքները, կարճ պատասխանով՝ հ. 35-44-ը և մեկը պնդումների փունջ է՝ հ. 45 առաջադրանքը: Ընտրովի և կարճ պատասխանով յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխանին տրվում է 1 միավոր, պնդումների փնջի ամբողջական ճիշտ պատասխանի համար տրվում է 6 միավոր: Ա մակարդակի 45 առաջադրանքներից քննություն հանձնողը կարող է վաստակել առավելագույնը 50 միավոր:

Բ մակարդակը կազմված է 25 առաջադրանքից (հ. 46-70): Դրանցից ընտրովի պատասխանով են հ. 46-57 առաջադրանքները, կարճ պատասխանով՝ հ. 58-69-ը և մեկը պնդումների փունջ է՝ հ. 70 առաջադրանքը: Քննություն հանձնողը Բ մակարդակի 25 առաջադրանքներից կարող է վաստակել առավելագույնը 30 միավոր:

Այսպիսով՝ քննություն հանձնողը միասնական քննության թեստի 70 առաջադրանքներից միասին կարող է վաստակել առավելագույնը 80 միավոր:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՏԻՊԵՐԸ

Թեստում ընդգրկվում են 8 տիպի առաջադրանքներ՝

1. տարեթվերի իմացությունը ստուգող,
2. փաստերի իմացությունը ստուգող,
3. սկզբնաղբյուրների իմացությունը և դրանք վերլուծելու ու գնահատելու հմտությունները ստուգող,
4. տերմինների ու հասկացությունների իմացությունը և մեկնաբանելու հմտությունները ստուգող,
5. իրադարձությունների և երևույթների պատճառների ու հետևանքների իմացությունը, պատճառահետևանքային կապերը վերլուծելու և մեկնաբանելու հմտությունները ստուգող,
6. իրադարձությունների, երևույթների, անունների և այլնի ժամանակագրության իմացությունը և ճիշտ հաջորդականությամբ դասավորելու հմտությունը ստուգող,
7. երևույթների, փաստերի, տարեթվերի, կրթամշակութային հաստատությունների, վայրերի, ստեղծագործությունների, տեղանունների կամ անձնանունների համապատասխանեցման հմտությունները ստուգող,
8. փաստարկների ու պնդումների համադրման և խմբավորման հմտությունները ստուգող:

Քննական թեստի Ա մակարդակում ընդգրկվում են առաջադրանքների բոլոր տիպերը, իսկ Բ մակարդակում՝ առաջադրանքների 4-8-րդ տիպերը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Քննական թեստի առաջադրանքների կատարման հանձնարարությունները ձևակերպվում են հարցերի կամ պահանջների տեսքով:

Ընտրովի պատասխանով առաջադրանքներում ձևակերպվում է հարցը կ ա մ պահանջը, և տրվում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից միայն մեկն է ճիշտ:

Կարճ պատասխանով առաջադրանքները երկու տեսակի են և ունեն կատարման տարբեր եղանակներ:

Առաջին տեսակի կարճ պատասխաններով առաջադրանքներում պահանջից հետո կարող են տրված լինել պատասխանի համարակալված՝ հինգից մինչև ինը տարբերակ (բացատրություններ, տերմիններ, պնդումներ, իրադարձություններ և այլն), որոնցից պետք է ընտրել ճիշտ պատասխանները:

Ա մակարդակում տրված են հինգ կամ վեց համարակալված տարբերակներ, որոնցից ճիշտ են երկուսը: Մեկ ճիշտ պատասխան կամ սխալ պատասխաններ նշելու, ինչպես նաև պատասխանի բացակայության դեպքում քննություն հանձնողը միավոր չի վաստակում:

Բ մակարդակում առաջին տեսակի կարճ պատասխանով առաջադրանքներում ճիշտ են պատասխանի համարակալված յոթից մինչև ինը տարբերակներից երեքը կամ չորսը: Այդ դեպքում, կախված առաջադրանքից, անհրաժեշտ է գտնել և գրանցել պատասխանի երեք կամ չորս ճիշտ պատասխանները: Ոչ ամբողջական, ավել պատասխան պարունակող կամ սխալ պատասխանի, ինչպես նաև պատասխանի բացակայության դեպքում քննություն հանձնողը միավոր չի վաստակում:

Ա մակարդակում երկրորդ տ ե ս ա կ ի կարճ պատասխաններով առաջադրանքներում 5 դատարկ վանդակներում անհրաժեշտ է լրացնել տրված փաստերի, անունների, իրադարձությունների, տարեթվերի և այլնի համարներն այնպես, որ ստացվի ճիշտ ժամանակագրական հաջորդականություն կամ համապատասխանություն: Ճիշտ ամբողջական պատասխանի համար տրվում է 1 միավոր, իսկ մեկ և ավելի սխալ պարունակող պատասխանի, ամբողջական պատասխանի բացակայության կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

Բ մակարդակում երկրորդ տեսակի կարճ պատասխաններով առաջադրանքներում 6 կամ 7 դատարկ վանդակներում անհրաժեշտ է լրացնել տրված փաստերի, անունների, իրադարձությունների, տարեթվերի և այլնի համարներն այնպես, որ ստացվի ճիշտ ժամանակագրական հաջորդականություն կամ համապատասխանություն: Ճիշտ ամբողջական պատասխանի համար տրվում է 1 միավոր, իսկ մեկ և ավելի սխալ պարունակող պատասխանի կամ ամբողջական պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

Պնդումների փունջ առաջադրանքները թեստում ներկայացվում են հետևյալ կերպ. տրված են 6 պնդումներ, որոնցից յուրաքանչյուրի համար պետք է ընտրել առաջարկվող երեք պատասխաններից՝ «Ճիշտ է», «Սխալ է» կամ «Չգիտեմ», մեկը: Այս առաջադրանքից հնարավոր է վաստակել առավելագույնը 6 միավոր:

Քննական թեստի առաջադրանքները կատարելուց հետո քննության մասնակիցն իր ընտրած կամ ստացած պատասխանները պետք է գրանցի պատասխանների ձևաթղթի համապատասխան համարներում:

Թեստ – գրքույկը ծառայում է նաև սևագրության համար և չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:

Գնահատումը կատարվում է հետևյալ կերպ. բացի պնդումների փնջից՝ բոլոր առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր, սխալ պատասխանը կամ պատասխանի բացակայությունը՝ 0:

Պնդումների փնջի յուրաքանչյուր պնդման դիմաց ճիշտ նշված «Ճիշտ է» կամ «Սխալ է» պատասխանի համար քննություն հանձնողը վաստակում է մեկական միավոր: «Չգիտեմ» պատասխանի համար միավոր չի տրվում և միավոր չի պակասում: Սխալ նշված «Ճիշտ է» կամ «Սխալ է» պատասխանի համար քննություն հանձնողը ոչ միայն միավոր չի ստանում, այլև կորցնում է մեկ միավոր՝ տվյալ փնջի համար նախատեսված միավորներից: Այսպես՝ եթե քննություն հանձնողը վեց առաջադրանքներից չորսին տվել է ճիշտ պատասխան, մեկին՝ սխալ և մեկին նշել է «Չգիտեմ» պատասխանը, ապա նա վաստակում է երեք միավոր: Եթե վաստակած և կորցրած միավորների քանակը հավասար է, կամ կորցրած միավորների թիվը գերազանցում է վաստակած միավորների թիվը, ապա առաջադրանքի պատասխանը գնահատվում է 0:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՆՄՈՒՇՆԵՐ

Ա մակարդակ

1. Տարեթվերի իմացություն

Այս առաջադրանքները միայն ընտրովի պատասխանով են: Ձևակերպվում է հարցը կամ պահանջը, և տրվում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից միայն մեկն է ճիշտ: Օրինակ՝

3. Ե՞րբ է ՀՀ Գերագույն խորհուրդը Հայաստանը հռչակել անկախ պետություն:

1) 1991 թ. սեպտեմբերի 21
2) 1991 թ. հոկտեմբերի 16
3) 1991 թ. սեպտեմբերի 23
4) 1990 թ. օգոստոսի 23

Այս և ընտրովի պատասխանով մյուս առաջադրանքներին պատասխանելիս՝ քննություն հանձնողը համապատասխան համարի առաջադրանքի սյունակի չորս վանդակներից մեկում պետք է դնի «**X**» նշանը: Օրինակ՝ եթե նա 3-րդ առաջադրանքի համար ընտրել է 3-րդ պատասխանը, ապա համապատասխան վանդակում պետք է դնի «**X**» նշանը:

Եթե քննություն հանձնողը ընտրովի պատասխանով որևէ առաջադրանքի պատասխանել է սխալ ու ցանկանում է ուղղել իր սխալը, ապա պատասխանների ձևաթղթում ***«Ամբողջ ձևաթղթում սխալ նշված պատասխանները փոխելու տեղը»*** հատվածում պետք է գրանցի առաջադրանքի համարը և կատարի նոր նշում:

2. Փաստերի իմացություն

Այս առաջադրանքները նույնպես միայն ընտրովի պատասխանով են: Օրինակ՝

7. Ո՞րն է հայերեն առաջին տպագիր գիրքը:

1) «Ուրբաթագիրք»
2) «Տաղարան»
3) «Տօնացոյց»
4) «Սաղմոսարան»

3. Աշխատանք սկզբնաղբյուրների հետ

Այս առաջադրանքները ևս միայն ընտրովի պատասխանով են: Ներկայացվում է հարցը կամ պահանջը, սկզբնաղբյուրային կամ այլ տեքստից մեջբերումը, և տրվում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից միայն մեկն է ճիշտ: Օրինակ՝

11. Ո՞ր մայրաքաղաքի կառուցման մասին են մեջբերված խոսքերը:

«Կառուցվեց մեծ և շատ գեղեցիկ մի քաղաք, որին թագավորը տվեց իր անունը և այն հռչակեց Հայաստանի քաղաքամայր»:

1) Վաղարշապատ
2) Սամոսատ
3) Արտաշատ
4) Տիգրանակերտ

4. Տերմինների և հասկացությունների իմացություն և մեկնաբանություն

Այս առաջադրանքները ըստ կառուցվածքի երկու տեսակի են:

Ընտրովի պատասխանով առաջադրանքներում հարցի կամ պահանջի ձևակերպումից հետո ներկայացվում է չորս կամ հինգից մինչև վեց տերմինի և հասկացության բացատրություն: Պատասխանի առաջարկվող չորս տարբերակներից միայն մեկն է ճիշտ: Օրինակ՝

15. Արշակունյաց շառավիղներից ձևավորված առանձին խավը կոչվում էր՝

1) բդեշխներ
2) թագադիրներ
3) ասպետներ
4) ոստանիկներ

Կարճ պատասխանով առաջադրանքներում ձևակերպումից հետո ներկայացվում են տերմինների կամ հասկացությունների բացատրության 5-6 տարբերակներ, որոնցից պետք է ընտրել ճիշտ պատասխանի երկու տարբերակների համարները: Օրինակ՝

35. Թվարկվածներից որո՞նք են բնորոշում նէպը:

1. խոշոր և միջին բոլոր ձեռնարկությունների սեփականաշնորհումը
2. ազատ առևտուրի վերականգնումը
3. դրամական աշխատավարձի կիրառման արգելքը
4. վարձու աշխատանքի կիրառման արգելքը
5. պարենմասնատրման փոխարինումը պարենհարկով

Այս և կարճ պատասխանով մյուս առաջադրանքներին պատասխանելիս քննություն հանձնողը պատասխանները պետք է գրանցի նախատեսված հորիզոնական վանդակներում: Յուրաքանչյուրում վանդակում պետք է գրել մեկ թվանշան:

Եթե քննություն հանձնողը կարճ պատասխանով որևէ առաջադրանքի պատասխանել է սխալ ու ցանկանում է ուղղել իր սխալ նշումը, ապա պատասխանների ձևաթղթում ***«Ամբողջ ձևաթղթում սխալ նշված պատասխանները փոխելու տեղը»*** հատվածում պետք է գրանցի առաջադրանքի համարը և կատարի նոր նշում:

5. Իրադարձությունների և երևույթների պատճառների ու հետևանքների իմացություն և մեկնաբանություն

Ըստ կառուցվածքի այս առաջադրանքները երկու տեսակի են:

Ընտրովի պատասխանով առաջադրանքներում հարցի կամ պահանջի ձևակերպումից հետո ներկայացվում է չորս կամ հինգից մինչև վեց պնդում կամ մեկնաբանություն: Պատասխանի առաջարկվող չորս տարբերակներից միայն մեկն է ճիշտ: Օրինակ՝

17. Թվարկվածներից ո՞րն է 1828 թ. պարսկահպատակ հայերի վերաբնակեցման հիմնական հետևանքը:

1) Ախալքալաքի գավառում պարսկահայերը հիմնադրեցին 50 գյուղ:
2) Արևելյան Հայաստանի տարածքի մեծ մասի վրա կրկին սկսվեց ազգահավաք գործընթաց:
3) Համախմբվեցին հայ հասարակության տարբեր խավեր, և ժողովրդական պայքարը նոր թափ ստացավ:
4) Կարս քաղաքը զրկվեց մեծ թվով հայ առևտրականներից ու արհեստավորներից:

Կարճ պատասխանով առաջադրանքներում ձևակերպումից հետո ներկայացվում են պատասխանի համարակալված 5-6 տարբերակներ, որոնցից պետք է ընտրել ճիշտ պատասխան հանդիսացող երկու տարբերակների համարը: Օրինակ՝

36. Թվարկվածներից որո՞նք են XVIII դ. 20–ական թթ. Սյունիքի ազատագրական պայքարի պարտության պատճառներ:

1. Մխիթար սպարապետի՝ թշնամու հետ բանակցելու մտքին հակվելը:
2. Հայկական զորքերի հրամանատարության մեջ տեղի ունեցած պառակտումը:
3. Եսայի Հասան–Ջալալյանի մահը:
4. Սյունեցիների ազատասիրական ոգու անկումը:
5. Հայկական զորքերի միայնակ մնալը թշնամու գերակշիռ ուժերի դեմ:

6. Իրադարձությունների և երևույթների ժամանակագրության իմացություն

Ըստ կառուցվածքի այս առաջադրանքները երկու տեսակի են:

Ընտրովի պատասխանով առաջադրանքներում հարցի կամ պահանջի ձևակերպումից հետո տրվում են 4-6 անուններ, իրադարձություններ և այլն, ինչպես նաև պատասխանի չորս տարբերակ: Պատասխանի չորս տարբերակներից միայն մեկն է ճիշտ:

Օրինակ՝

23. Մեծ Հայքի Արշակունի արքաների անունները դասավորե՛ք ըստ նրանց գահակալման հաջորդականության և գտե՛ք պատասխանի ճիշտ տարբերակը:

ա. Տրդատ II
բ. Վարազդատ
գ. Վաղարշ I
դ. Վռամշապուհ

1) գ, ա, բ, դ
2) ա, գ, բ, դ
3) դ, բ, ա, գ
4) բ, գ, ա, դ

Օրինակ՝

24. Գտնել այն իրադարձությունը, որն ըստ ժամանակագրական հաջորդականության տեղի է ունեցել վերջինը: (կամ՝ առաջինը, երրորդը և այլն)

1) Պողոս Նուբարի նախաձեռնությամբ Փարիզում Հայոց ազգային համագումարը
2) ՀՅԴ 9–րդ ընդհանուր ժողովը
3) Արևմտահայերի երկրորդ համագումարը
4) Առաջին Հանրապետության խորհրդարանական առաջին ընտրությունները

Այս տեսակի *կարճ պատասխանով* առաջադրանքներից մեկը պահանջում է թվարկված 5-6 տարբերակներից ընտրել այն երկու իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել նշված դարում, տարեթվին կամ այլն: Ձևաթղթում պետք է լրացնել ընտրված երկու տարբերակների համարները:

Օրինակ՝

38. Ընտրե՛ք այն իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել 885 թվականին:

1. Աշոտ Բագրատունու թագադրումը Գևորգ Գառնեցու կողմից
2. Սևանի հաղթական ճակատամարտը արաբների դեմ
3. Սմբատ I Բագրատունու գահակալման սկիզբը
4. խալիֆի կողմից թագ ուղարկելը Աշոտ I Բագրատունուն
5. Դողսի ճակատամարտը

Այս տեսակի առաջադրանքներից մյուսը պետք է ներկայացվի հետևյալ կերպ. հարցի կամ պահանջի ձևակերպումից հետո 1-5 թվարկումով տրվում են անուններ, իրադարձություններ և այլն: Պատասխանի լրացման համար տրվում են 5 դատարկ վանդակներ: Վանդակներում անհրաժեշտ է լրացնել տրված անունների, իրադարձությունների և այլնի համարներն այնպես, որ ստացվի ճիշտ ժամանակագրական հաջորդականություն: Օրինակ՝

43. Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ:

1. Մծբինի պայմանագրի կնքումը
2. Տրդատ II–ի հաղթական արշավանքը դեպի Տիզբոն
3. Արտաշեսյան հարստության ընդհատումը
4. Խառանի ճակատամարտը
5. Երվանդ III–ի դառնալը Մեծ Հայքի թագավոր

Քննություն հանձնողը ձևաթղթում պատասխանը պետք է լրացնի թվերի իր դասավորած հերթականությամբ՝ յուրաքանչյուր վանդակում մեկ թվանշան գրելով:

Եթե քննություն հանձնողը կարճ պատասխանով որևէ առաջադրանքի պատասխանել է սխալ ու ցանկանում է ուղղել իր սխալ նշումը, ապա պատասխանների ձևաթղթի համապատասխան հատվածում պետք է գրանցի առաջադրանքի համարը և կատարի նոր նշում:

7. Երևույթների, փաստերի, տարեթվերի, կրթամշակութային հաստատությունների, վայրերի, ստեղծագործությունների, տեղանունների կամ անձնանունների համապատասխանեցում

Այս առաջադրանքները ընտրովի և կարճ պատասխանով են:

Ընտրովի պատասխանով առաջադրանքում հարցից կամ պահանջից հետո ներկայացվում են պատմական երևույթների, փաստերի, տարեթվերի, կրթամշակութային հաստատությունների, վայրերի, ստեղծագործությունների, տեղանունների կամ անձնանունների երկու շարքեր՝ առաջին շարքում ընդգրկվում են չորսից հինգ, իսկ երկրորդում՝ մեկով ավելի բաղադրիչներ: Տրվում է դրանց համապատասխանեցումով կազմված պատասխանի չորս տարբերակ: Պետք է

ընտրել պատասխանի չորս տարբերակներից միայն մեկը:

Օրինակ՝

27. Համապատասխանեցրե՛ք ստեղծագործությունների անունները հեղինակների անուններին և գտե՛ք պատասխանի ճիշտ տարբերակը:

1) Ստեփանոս Շահումյան	ա. «Տիեզերական պատմություն»
2) Ստեփանոս Պալասանյան	բ. «Համառոտ պատմութիւն Աղուանից»
3) Աբրահամ Երևանցի	գ. «Պատմութիւն Դավիթ բեկին»
4) Հովսեփ Գաթըրճյան	դ. «Պատմութիւն Հայոց»
	ե. «Պատմութիւն պատերազմաց»

1) 1–գ, 2–դ, 3–ե, 4–ա
2) 1–բ, 2–դ, 3–ե, 4–ա
3) 1–գ, 2–դ, 3–բ, 4–ե
4) 1–բ, 2–ա, 3–գ, 4–ե

Կարճ պատասխանով առաջադրանքը պետք է ներկայացվի հետևյալ կերպ. ձևակերպումից հետո տրված են պատմական երևույթների, փաստերի, տարեթվերի, կրթամշակութային հաստատությունների, վայրերի, ստեղծագործությունների, տեղանունների կամ անձնանունների երկու շարք: Առաջին շարքում ընդգրկվում են հինգ (համարակալված են տառերով), իսկ երկրորդում վեց (համարակալված են թվերով)՝ բաղադրիչ, և տրված են տառերով համարակալված ու զուգահեռաբար դատարկ վանդակներ: Դատարկ վանդակներում պետք է լրացնել առաջին շարքի տառի բաղադրիչին համապատասխանող երկրորդ շարքի բաղադրիչի թիվը: Օրինակ՝

44. Կատարե՛ք համապատասխանեցում:

Ա. Հովհաննես Ա Մանդակունի
Բ. Ներսես Գ Տայեցի
Գ. Հովսեփ Ա Վայոցձորցի
Դ. Ներսես Ա Պարթև
Ե. Հովհաննես Բ Գաբեղենացի

1. 571–572 թթ. ապստամբությունը
2. Վարդանանց պատերազմը
3. Աշտիշատի ժողովը
4. Վահանանց պատերազմը
5. Դվինի 506 թ. եկեղեցական ժողովի գումարումը
6. Զվարթնոցի տաճարի կառուցումը

Ա	Բ	Գ	Դ	Ե
4	6	2	3	1

Ձևաթղթում պետք է լրացնել միայն համապատասխան թվերը նույն հերթականությամբ՝ յուրաքանչյուր վանդակում մեկ թիվ գրելով:

8. Փաստարկների ու պնդումների համադրում և խմբավորում

Ըստ կառուցվածքի այս առաջադրանքները երկու տեսակի են:

Ընտրության պատասխանով առաջադրանքներում հարցից կամ պահանջից հետո ներկայացվում են 4–6 փաստարկներ կամ պնդումներ: Պատասխանի 4 տարբերակներից միայն մեկն է ճիշտ: Օրինակ՝

31. Ո՞ր տարբերակում են բոլոր պնդումները ճիշտ:

ա. Վռամշապուհ արքան առանց Սասանյանների հետ համաձայնեցնելու հայոց կաթողիկոս է նշանակում Սահակ Պարթևին՝ փորձելով միավորել Մեծ Հայքի երկու մասերը:

բ. Վռամշապուհ արքայի և Սահակ Պարթև կաթողիկոսի հովանավորությամբ Մեսրոպ Մաշտոցն իրագործում է մշակութային դարակազմիկ իրադարձություն՝ ստեղծում է Հայոց այբուբենը:

գ. Վռամշապուհ արքայի հետ խորհրդակցելով՝ Սահակ Պարթևը մեկնում է պարսից արքունիք ու ստանում Վռամ IV–ի համաձայնությունը իր փեսա Համազասպ Մամիկոնյանին Հայոց սպարապետ նշանակելու մասին:

դ. Հայ նախարարների խնդրանքով պարսից թագավոր Հազկերտ I–ը Վռամշապուհի մահից հետո Հայոց թագավոր է հաստատում Վռամշապուհի որդի Շապուհին:

ե. Վռամշապուհ արքային չի հաջողվում օգտվել ստեղծված բարենպաստ իրավիճակից և միավորել Մեծ Հայքի երկու մասերը:

1) ա, բ 2) բ, գ 3) գ, դ 4) դ, ե

Կարճ պատասխանով առաջադրանքներում ձևակերպումից հետո ներկայացվում են պատասխանի համարակալված 5-6 տարբերակներ, որոնցից պետք է ընտրել ճիշտ պատասխան հանդիսացող երկու տարբերակների համարները: Օրինակ՝

40. Գտե՛ք սխալ պնդումները:

1. Անանիա Շիրակացու կազմած թվաբանության դասագիրքը աշխարհում հնագույնների շարքին է պատկանում:
2. VI դարում իմաստասիրությամբ զբաղվել է նշանավոր ճարտասան և մանկավարժ Պարույր Հայկազնը:
3. Դավիթ Անհաղթն իր «Եղծ աղանդոց» երկում քրիստոնեական հավատքը պաշտպանել է հակադիր ուսմունքներից:
4. «Սահմանք իմաստասիրութեան» երկում մեծ տեղ է հատկացված բնության ճանաչմանը:
5. Դավիթ Անհաղթը կատարել է գիտությունների դասակարգում՝ ըստ բնագիտության, թվաբանության և աստվածաբանության:

Պնդումների փունջը ներկայացվում է հետևյալ կերպ. տրված են 6 պնդումներ, որոնցից յուրաքանչյուրին պետք է տալ առաջարկվող երեք պատասխաններից՝ «Ճիշտ է», «Սխալ է» կամ «Չգիտեմ» մեկը: Այս առաջադրանքից հնարավոր է վաստակել առավելագույնը 6 միավոր:

Ձևաթղթում տվյալ պնդման համարի տակ տրված երեք վանդակներից որևէ մեկում պետք է դնել X-նշանը:



Եթե քննություն հանձնողը պնդումների փնջում պատասխանել է սխալ ու ցանկանում է ուղղել իր սխալ նշումը, ապա պատասխանների ձևաթղթի համապատասխան հատվածում պետք է գրանցի առաջադրանքի համարը և կատարի նոր նշում:

Օրինակ՝

45. Տրված վեց պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել՝ «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը:

1. 1880–ական թթ. կեսերից պահպանողական և ազատական հոսանքներն իրենց սպառում են:
2. Արևմտյան Հայաստանում ստեղծված առաջին խմբակը հայտնի է «Հայասեր–ազգասեր» անունով:
3. «Բարենպատակ ընկերություն» և «Հայրենիքի սիրո գրասենյակ» խմբակների նպատակն էր ոչ միայն ազատագրել Արևմտահայաստանը, այլև հասնել ազգի երկու հատվածների միավորմանը:
4. Գրիգոր Արծրունու ազատագրական խմբակը հիմնվել էր Երևանում:
5. Բեռլինի վեհաժողովից հետո հայ հասարակական–քաղաքական գործիչներն իրենց հույսը սկսեցին կապել Գերմանիայի ռազմաքաղաքական զորեղ աջակցությամբ ծավալված հայ զինված պայքարի հետ:
6. «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունն ունեցել է մոտ 30 անդամ, որոնք փորձել են զենք առաքել «թուրքահայ եղբայրներին»:

Բ մակարդակ

4. Տերմինների և հասկացությունների իմացություն և մեկնաբանություն

Այս առաջադրանքները ըստ կառուցվածքի երկու տեսակի են:

Ընտրության պատասխանով առաջադրանքները կարող են ներկայացվել երկու ձևով:

Առաջին՝ հարցի կամ պահանջի ձևակերպումից հետո ներկայացվում են համարակալված 7-10 տերմինների կամ հասկացությունների բացատրություններ: Պատասխանի առաջարկվող չորս տարբերակներից միայն մեկն է ճիշտ:

Երկրորդ՝ կարող է ներկայացվել նաև համապատասխանության ձևով: Տրվում են 4-9 տերմիններ կամ հասկացություններ և դրանց բացատրության վերաբերյալ մեկով ավելի տարբերակներ: Պատասխանի տրված չորս տարբերակներից միայն մեկն է ճիշտ:

Կարճ պատասխանով առաջադրանքներում ձևակերպումից հետո ներկայացվում են պատասխանի համարակալված 7-9 տարբերակներ, որոնցից պետք է ընտրել ճիշտ պատասխան հանդիսացող երեք կամ չորս տարբերակների համարները:

5. Իրադարձությունների և երևույթների պատճառների ու հետևանքների իմացություն և մեկնաբանություն

Ըստ կառուցվածքի այս առաջադրանքները երկու տեսակի են:

Ընտրության պատասխանով առաջադրանքներում պահանջի ձևակերպումից հետո ներկայացվում է համարակալված 7-10 պնդում կամ մեկնաբանություն: Տրվում են պատասխանի 4 տարբերակներ, որոնցից միայն մեկն է ճիշտ:

Կարճ պատասխանով առաջադրանքներում ձևակերպումից հետո ներկայացվում են պատասխանի համարակալված 7-9 տարբերակներ: Պետք է ընտրել երեք կամ չորս ճիշտ պատասխանների համարները:

6. Իրադարձությունների և երևույթների ժամանակագրության իմացություն

Ըստ կառուցվածքի այս առաջադրանքները երկու տեսակի են:

Ընտրության պատասխանով առաջադրանքներում պահանջի ձևակերպումից հետո ներկայացվում է համարակալված 7-10 անունների կամ իրադարձությունների շարք, և տրվում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից պետք է ընտրել ճիշտը:

Այս տեսակի *կարճ պատասխանով* առաջադրանքներից մեկը պահանջում է թվարկված 7-9 տարբերակներից ընտրել այն երեք կամ չորս իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել նշված դարում, տարեթվին կամ այլն: Ձևաթղթում պետք է լրացնել ընտրված երեք կամ չորս պատասխանների համարները:

Այս տիպի առաջադրանքներից երկուսը թեստում պետք է ներկայացնել հետևյալ կերպ. պահանջի ձևակերպումից հետո տրվում են 7 անունների, իրադարձությունների և այլնի շարք, այնուհետև տրվում են 7 դատարկ վանդակներ: Վանդակներում անհրաժեշտ է լրացնել տրված անունների, իրադարձությունների և այլնի համարներն այնպես, որ ստացվի ճիշտ ժամանակագրական հաջորդականություն:

Ձևաթղթում պատասխանը պետք է լրացնել պատասխանի թվերի նույն հերթականությամբ՝ յուրաքանչյուր վանդակում մեկ թիվ գրելով:

7. Երևույթների, փաստերի, տարեթվերի, կրթամշակութային հաստատությունների, վայրերի, ստեղծագործությունների, տեղանունների կամ անձնանունների համապատասխանեցում

Այս տեսակի ընտրովի պատասխանով առաջադրանքների ձևակերպումից հետո ներկայացվում են պատմական իրադարձությունների, երևույթների, տարեթվերի, կրթամշակութային հաստատությունների, վայրերի, ստեղծագործությունների, տեղանունների, անձնանունների և այլնի երկու շարքեր: Առաջին շարքում ընդգրկվում են վեցից մինչև տասը, իսկ երկրորդում՝ մեկով ավելի բաղադրիչներ, և տրվում է դրանց համապատասխանեցումով կազմված պատասխանի չորս տարբերակ: Պատասխանի չորս տարբերակներից միայն մեկն է ճիշտ:

Կարճ պատասխանով առաջադրանքները պետք է ներկայացվեն հետևյալ կերպ. ձևակերպումից հետո ներկայացվում են պատմական իրադարձությունների, երևույթների, փաստերի, տարեթվերի, կրթամշակութային հաստատությունների, վայրերի, ստեղծագործությունների, տեղանունների կամ անձնանունների երկու շարքեր. առաջին շարքում ընդգրկվում են 6-7 (համարակալված են տառերով), իսկ երկրորդում՝ մեկով ավել (համարակալված են թվերով) բաղադրիչներ: Տրվում են տառերով համարակալված և զուգահեռաբար դատարկ վանդակներ: Դատարկ վանդակներում պետք է լրացնել առաջին շարքի տառի բաղադրիչին համապատասխանող երկրորդ շարքի բաղադրիչի թիվը:

Ձևաթղթում պետք է լրացնել միայն ընտրված 6 կամ 7 բաղադրիչների թվերը՝ յուրաքանչյուր վանդակում մեկ թիվ գրելով:

8. Փաստարկների ու պնդումների համադրում և խմբավորում

Ըստ կառուցվածքի այս առաջադրանքները երկու տեսակի են:

Ընտրովի պատասխանով առաջադրանքներում հարցի կամ պահանջի ձևակերպումից հետո ներկայացվում են համարակալված 7-10 փաստարկներ կամ պնդումներ, և տրվում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից միայն մեկն է ճիշտ:

Կարճ պատասխանով առաջադրանքներում ձևակերպումից հետո ներկայացվում են պատասխանի 7-9 համարակալված տարբերակներ, որոնցից պետք է ընտրել երեք կամ չորս ճիշտ պատասխանների համարները:

Պնդումների փունջը ներկայացվում և ձևաթղթում լրացվում է նույն կերպ, ինչպես որ Ա մասկարդակում է: Այս առաջադրանքից հնարավոր է վաստակել առավելագույնը 6 միավոր:

ՔՆՆԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ

Քննական ծրագիրը ներառում է «Հայոց պատմություն» առարկայի 2018 թ. ու 2019 թ. վերահրատարակված 6-9-րդ դասարանների դասագրքերի (տե՛ս Գրականության ցանկը) համապատասխան ուսումնական նյութերը:

ՀՆԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԻՆ ՇՐՋԱՆ

ԲԱԺԻՆ 1. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՆԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Հայոց հայրենիքը:

Հայկական լեռնաշխարհը՝ հայերի հայրենիք: Հայկական լեռնաշխարհի դիրքը, սահմանները, գետերը, լճերը: Հայաստանի պատմավարչական բաժանումը:

Վաղ պետական կազմավորումները Հայաստանի տարածքում:

Հայաստանը հնդեվրոպական նախահայրենիք: Վաղ պետական կազմավորումների առաջացումը. Արատտա, Հայասա, Նաիրի, Հայկյանների Արարատյան թագավորություն:

ԲԱԺԻՆ 2. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Վանի համահայկական թագավորությունը:

Վանի թագավորության հիմնադրումը Ք.ա. IX դարում: Տուշպա-Վանը՝ մայրաքաղաք: Վանի թագավորության հզորացումը (Մենուա, Արգիշտի I, Սարդուրի II): Թագավորության պայքարն արտաքին ուժերի դեմ: Թագավորության անկումը:

Հայկազունի Երվանդականների թագավորությունը:

Պարույր Նահապետը՝ Հայոց թագավոր: Երվանդ I Սակավակյաց: Տիգրան I Երվանդյան: Ք.ա. 522-521 թթ. հակապարսկական ապստամբությունը: Հայաստանը Աքեմենյան տերության կազմում: Երվանդական թագավորության վերականգնումը. Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները և Հայաստանը: Հայկական թագավորությունները Ք.ա III դարում: Հայկական թագավորությունները և Սելևկյանները:

Մեծ Հայքի Արտաշեսյան թագավորությունը:

Հայկական թագավորությունների անկախացումը: Արտաշես I-ը և հայկական հողերի միավորումը: Արտաշես I-ի բարենորոգումները:

Հայաստանը՝ աշխարհակալ տերություն:

Արտաշես I-ի հաջորդները: Տիգրան II-ի գահակալումը: Ծոփքի միացումը Մեծ Հայքին: Տիգրան II Մեծի նվաճումները: Տերության տարածքը և բնակչությունը: Տիգրանակերտ մայրաքաղաքը: Հայ-հռոմեական պատերազմը (Տիգրանակերտի և Արածանիի ճակատամարտերը): Արտաշատի հաշտության պայմանագիրը:

Մեծ Հայքի թագավորությունն Արտավազդ II-ի օրոք: Կրասոսի և Անտոնիոսի արշավանքները: Արտաշես II: Արտաշեսյան վերջին գահակալները:

Մեծ Հայքի Արշակունյաց թագավորությունը (I-III դարեր):

Հայաստանի դրածո թագավորները: Արշակունյաց արքայատոհմի հաստատումը Հայաստանում. Տրդատ I-ի գահակալումը և գործունեությունը: Սանատրուկ, Վաղարշ I, Վաղարշապատ մայրաքաղաքի կառուցումը: Վաղարշ II-ը և Արշակունիների ժառանգական իշխանության հաստատումը: Սասանյան հեղաշրջումը Պարսկաստանում և հայ-պարսկական հարաբերությունները: Տրդատ III Մեծ: Մծբինի 40-ամյա հաշտությունը:

Հին Հայաստանի պետական կառավարման համակարգը, տնտեսությունը և սոցիալական կառուցվածքը:

Պետական կառավարման համակարգը, բանակը: Տնտեսությունը (գյուղատնտեսություն,

արհեստներ, ներքին և արտաքին առևտուր): Բնակչությունը, քաղաքները, գյուղական համայնքը:

Հին Հայաստանի մշակույթը:

Հայկական մշակույթի ակունքները: Առասպելներ: Դիցարանը: Արվեստը, ճարտարապետությունը:

ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ: Հայոց պատմության միջնադարյան շրջանի բովանդակությունը, առանձնահատկությունները:

ԲԱԺԻՆ 1. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

Ավատատիրության հաստատումը Հայաստանում:

Ավատատիրություն ձևավորումը, աստիճանակարգությունը: Ազատների և անազատների դասերը: Պետական կառավարման համակարգը, բանակը:

Քրիստոնեության ընդունումը որպես պետական կրոն:

Քաղաքական կացությունը Առաջավոր Ասիայում: Տրդատ III Մեծ և Գրիգոր Լուսավորիչ: Քրիստոնեությունը Հայաստանի պետական կրոն:

Պայքար թագավորական իշխանության ամրապնդման համար:

Թագավորական իշխանության ամրապնդման քաղաքականությունը: Խոսրով Կոտակ, Տիրան, Արշակ II, Պապ թագավոր: Մեծ Հայքի թագավորության թուլացումը: Խոսրով IV, Վռամշապուհ: Թագավորության անկումը:

Ազատագրական շարժումները V դարում:

Մարզպանական Հայաստանը, պարսից քաղաքականությունը: Կրոնափոխության առաջարկը: Վարդանանց պատերազմը. Ավարայրի ճակատամարտը: Վահանանց ապստամբությունը. նախադրյալները, սկիզբը, Ակոռիի և Ներսեհապատի ճակատամարտերը: Նվարսակի պայմանագիրը:

Հայաստանը VI-IX դարերում:

Արևմտյան Հայաստանը VI դարում, հակաբյուզանդական ելույթները: Արևելյան Հայաստանը VI դարում, 571 – 572 թթ. ապստամբությունը: Պարսկա - բյուզանդական պատերազմը և Հայաստանը:

Արաբական արշավանքները և Հայաստանը: Թեոդորոս Ռշտունին և հայ-արաբական պայմանագիրը: Հայաստանը Արաբական խալիֆայության կազմում: Հակաարաբական ապստամբությունները VIII դարում (703 թ., 774-775 թթ.,): Հայաստանի ինքնավարության վերականգնումը, 850-855 թթ. ապստամբությունը:

Հայկական մշակույթը V-IX դարերում:

Մեսրոպ Մաշտոցը և հայոց այբուբենի ստեղծումը: Դպրոցը: Պատմագրությունը: Փիլիսոփայությունը: Բնական գիտությունները: Արվեստը, ճարտարապետությունը:

ԲԱԺԻՆ 2. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԶԱՐԳԱՑԱԾ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

Հայաստանի Բագրատունյաց թագավորությունը:

Հայաստանի անկախության վերականգնումը. Աշոտ I: Սմբատ I: Երկրի անկախության ամրապնդումը. Աշոտ II Երկաթ: Թագավորության բարգավաճումն ու հզորացումը. Աբաս, Աշոտ III Ողորմած, Սմբատ II, Գագիկ I: Ենթակա թագավորությունների առաջացման նախադրյալները, Վասպուրականի, Կարսի, Լոռու և Սյունիքի թագավորությունները: Անիի

թագավորության թուլացումը, Գագիկ II. թագավորության անկումը:

Բագրատունյաց թագավորության տնտեսության վերելքը: Պետական կառավարման համակարգը, բանակը:

Հայ ժողովրդի պայքարը օտարերկրյա զավթիչների դեմ: Զաքարյաններ:

Սելջուկ-թյուրքերը և Հայաստանը: Հայկական թագավորությունները և իշխանությունները: Հայաստանը Զաքարյանների օրոք:

Հայաստանը և մոնղոլները: Պայքար հայկական պետականության վերականգնման համար: Հայաստանի քաղաքական իրավիճակը XIV դարում:

Կիլիկյան Հայաստանը:

Հայերը Կիլիկիայում: Ռուբինյան իշխանության առաջացումը, ընդարձակումը և պետության ամրապնդումը: Լևոն II իշխանի գործունեությունը, թագավորության հռչակումը: Լևոն Մեծագործի ներքին և արտաքին քաղաքականությունը:

Հեթումյան արքայատոհմի հաստատումը. Հեթում I: Հայ-մոնղոլական և հայ-մամլուքյան հարաբերությունները: Երկրի ներքին ճգնաժամը, օգնության հույսեր Եվրոպայից: Կենտրոնական թագավորության թուլացումն ու անկումը:

Կիլիկյան Հայաստանի պետական կառավարման համակարգը, բանակը:

Հայկական մշակույթը X - XIV դարերում:

Հայ մշակույթի վերածննդի նախադրյալները: Կրթական գործը, դպրոցները և համալսարանները: Պատմագրությունը: Իրավագիտությունը: Քանդակագործությունը, խաչքարագործությունը, մանրանկարչությունը, որմնանկարչությունը, երաժշտությունը: Ճարտարապետությունը:

ԲԱԺԻՆ 3. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

Հայաստանը XV դարից մինչև XVII դարի կեսերը:

Հայաստանի քաղաքական իրավիճակը XV դարում: Կաթողիկոսական աթոռի վերահաստատումը Էջմիածնում: Կ. Պոլսի Հայոց պատրիարքության ստեղծումը:

Քաղաքական դրությունը Մերձավոր Արևելքում, թուրք-պարսկական պատերազմները և Հայաստանը: Շահ Աբասը և հայերի բռնագաղթը: 1639 թ. Կասրե-Շիրինի հաշտության պայմանագիրը:

Հայկական իշխանությունները ուշ միջնադարում: Հայկական թագավորության վերականգնման փորձը Վասպուրականում: Հայաստանի ազատագրության համար պայքարը:

Հայկական մշակույթը (XV դար - XVII դարի առաջին կես):

Հայկական մշակույթի զարգացման պայմանները: Տպագրությունը. Հակոբ Մեղապարտ:

ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԲԱԺԻՆ 1. ՀԱՅԱՍՏԱՆԸ XVII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՑ ՄԻՆՉԵՎ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԸ

Ազատագրական պայքարի նոր փուլը XVII դարի երկրորդ կեսին և XVIII դարում:

Հայ ժողովրդի ազատագրական պայքարի վերելքի նախադրյալները, արևմտաեվրոպական կողմնորոշումը: Էջմիածնի 1677թ. ժողովը: Իսրայել Օրին և նրա գործունեությունը:

Ազատագրական պայքարի սկիզբն Արցախում. սղնախների ստեղծումը: Պետրոս I-ի կասպիական արշավանքը, թուրքերի ներխուժումը Անդրկովկաս, ռուս-թուրքական պայմանագիրը: Երևանի 1724 թ. հերոսական պաշտպանությունը: Զինված պայքարը Արցախում:

Ազատագրական պայքարի սկիզբը Սյունիքում: Դավիթ Բեկ: Հալիձորի պաշտպանությունը: Մխիթար Սպարապետ: Արցախի և Սյունիքի զինված պայքարի արդյունքները: Հայկական ինքնավարությունն Արցախում (Խամսայի մելիքություններ):

Ազատագրական պայքարի գաղութահայ կենտրոնները: Հովսեփ Էմինի գործունեությունը: Մադրասի հայրենասիրական խմբակը: Հայաստանի ազատագրության ծրագրերը (Հովսեփ Արղության, Շահամիր Շահամիրյան):

Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին կեսին:

Վարչաքաղաքական կացությունն Անդրկովկասում: 1804 - 1813 թթ. ռուս-պարսկական պատերազմը, Գյուլիստանի հաշտության պայմանագիրը: 1826 - 1828 թթ. ռուս-պարսկական պատերազմը: Թուրքմենչայի հաշտության պայմանագիրը, պարսկահայերի վերաբնակեցումը: Հայկական մարզը: 1836 թ. եկեղեցական կանոնադրությունը:

Արևմտյան Հայաստանը XIX դարի առաջին կեսին:

Արևմտյան Հայաստանի վարչական բաժանումը: 1806 - 1812 թթ. ռուս-թուրքական պատերազմը: 1828 - 1829 թթ. ռուս-թուրքական պատերազմը: Ադրիանապոլսի (Ադրիանուպոլսի) պայմանագիրը, արևմտահայերի վերաբնակեցումը:

Մշակույթը XVII դարի երկրորդ կեսից մինչև XIX դարի առաջին կեսը:

Հայկական մշակույթի զարգացման պայմանները և կենտրոնները: Դպրոցները: Տպագրությունը: Հայ մամուլի սկզբնավորումը, «Ազդարար»: Պատմագիտությունը, Վենետիկի Մխիթարյան միաբանությունը: Արվեստը:

ԲԱԺԻՆ 2. ՀԱՅԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Հայաստանը Ռուսական և Օսմանյան կայսրությունների կազմում:

Բարենորոգումներն Արևելյան Հայաստանում: Արդյունաբերության և ճանապարհաշինության զարգացումը: Ցարիզմի ազգային և գաղութային քաղաքականությունը Արևելյան Հայաստանում: Արևմտյան Հայաստանի սոցիալական և տնտեսական վիճակը: Վարչական բաժանումը և բնակչությունը:

Ազգային-հասարակական շարժումները:

Հայ հասարակական - քաղաքական միտքը. պահպանողականներ, ազատամիտներ, ազգայնականներ: Արևմտահայերի սահմանադրական շարժումը: Զեյթունի 1862 թ. ապստամբությունը:

Ռուս-թուրքական 1877 - 1878 թթ. պատերազմը և Հայկական հարցի միջազգայնացումը:

1877 - 1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի սկիզբը, ընթացքը և ավարտը: Հայերի մասնակցությունը պատերազմին. զինվորականներ, կամավորական ջոկատներ: Սան Ստեֆանոյի պայմանագիրը և Հայկական հարցը: Բեռլինի վեհաժողովը և Հայկական հարցի միջազգայնացումը:

Ազգային-ազատագրական պայքարը XIX դ. 70 - 90-ական թթ.:

Ազատագրական խմբակները և կազմակերպությունները: Հայ ազգային կուսակցությունները (Արմենական, Հնչակյան, Հայ հեղափոխական դաշնակցություն): Հայդուկային շարժումը, նշանավոր հայդուկները, շարժման նշանակությունը:

Արևմտահայության կոտորածները 1890-ական թթ., Հայոց ցեղասպանության սկիզբը: Բարենորոգումների Մայիսյան ծրագիրը: Հայերի ինքնապաշտպանական մարտերը, Զեյթունի ապստամբությունը:

Ազատագրական շարժումների ծավալումը XX դարի սկզբին:

Ցարիզմի ազգային-գաղութային քաղաքականության նոր դրսևորումը. 1903 թ. հունիսի 12-ի օրենքը, հայության համազգային պայքարը: Հայ-թաթարական ազգամիջյան կռիվները,

հայերի ինքնապաշտպանության կազմակերպումը:

Ս.Առաքելոց վանքի կռիվը: 1904 թ. Սասունի ապստամբությունը: Հայդուկային շարժման անկումը: Հակահամիդյան շարժումը, երիտթուրքերի 1908 թ. պետական հեղաշրջումը: Կիլիկիահայության կոտորածները և ինքնապաշտպանական մարտերը: Հայկական հարցը 1912 - 1914 թթ.:

Հայ ժողովուրդն Առաջին աշխարհամարտի տարիներին:

Հայաստանը և Ռուսաստանի ու Օսմանյան կայսրության ռազմաքաղաքական պլանները: Առաջին աշխարհամարտի Կովկասյան ճակատը: Հայ կամավորական շարժումը:

Հայոց Մեծ եղեռնը. «Ցեղասպանություն» հասկացությունը, հայերի ցեղասպանության երիտթուրքական ծրագիրը և դրա իրագործումը: Մեծ եղեռնի հետևանքները: Ինքնապաշտպանական հերոսամարտերը 1915 թվականին. Վան, Շապին Կարահիսար (Շապին Գարահիսար), Մուսա լեռ, Ուրֆա (Եդեսիա):

Ցարիզմի տապալումը և նոր իշխանության մարմինների ստեղծումը: Ժամանակավոր կառավարությունը և Հայկական հարցը: Արևմտահայերի և արևելահայերի առաջին համագումարները: Հոկտեմբերյան հեղափոխությունը և իշխանության նոր մարմինների ստեղծումը Անդրկովկասում:

Երզնկայի զինադադարը: Հայկական զորամիավորումների ստեղծումը: Խորհրդային Ռուսաստանը և Հայկական հարցը.«Թուրքահայաստանի մասին» հրովարտակը: Բրեստ-Լիտովսկի հաշտությունը և հայկական տարածքների հանձնումը Թուրքիային:

Պատերազմի վերսկսումը Կովկասյան ճակատում, թուրքերի ներխուժումը Հայաստան և Անդրկովկաս: Հայկական զորքի դիմադրությունը: Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսամարտերը, դրանց պատմական նշանակությունը:

Հայկական մշակույթը XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին:

Մշակույթի զարգացման նախադրյալները: Նոր դպրոցների հիմնումը Արևելյան և Արևմտյան Հայաստանում: Գիտությունը: Կերպարվեստը, թատրոնը, երաժշտությունը:

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆ

ԲԱԺԻՆ 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ (1918 թ. մայիսի 28 – 1920 թ. դեկտեմբերի 2)

Հանրապետության կայացումը:

Անդրկովկասի դաշնության լուծարումը, Հայաստանի Հանրապետության հռչակումը: Բաթումի պայմանագիրը: Արամ Մանուկյանը՝ Առաջին հանրապետության հիմնադիր: Իշխանության մարմինների և ազգային բանակի ստեղծումը: Հայաստանի Հանրապետության խորհրդանիշները: Անկախ պետականության վերականգնման պատմական նշանակությունը:

Սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքը:

Սոցիալ-տնտեսական դրությունը և տնտեսության վերականգնմանն ուղղված միջոցառումները, գաղթականության վիճակը: Քաղաքական կյանքը, կուսակցությունները: 1920 թ. Մայիսյան ապստամբությունը և դրա հետևանքները:

Մշակութային կյանքը. դպրոցական համակարգը, Հայաստանի համալսարանի հիմնադրումը, գիտության և մշակույթի գործիչների վերադարձը Հայաստան:

Առաջին հանրապետության միջազգային դրությունը 1918 - 1920 թթ.: Հայկական հարցը:

Հանրապետության հարաբերությունները Քառյակ միության հետ: Դիվանագիտական կապերի հաստատումը: Հայ-վրացական հարաբերությունները: Հայ-ադրբեջանական հարաբերությունները: Հայ–ռուսական հարաբերությունները, Թիֆլիսի համաձայնագիրը:

Փարիզի խաղաղության խորհրդաժողովը, հայկական պատվիրակությունները: Անկախ և

Միացյալ Հայաստանի հռչակումը: Հայաստանի մանդատի խնդիրը, Հայկական հարցը Սան Ռեմոյի խորհրդաժողովում: Սևրի պայմանագիրը: Կիլիկիահայությունը 1918 – 1921 թթ:

Հայաստանի Հանրապետության անկումը:

Քեմալական շարժումը և Հայաստանը: 1920 թ. թուրք–հայկական պատերազմը: Հայաստանի խորհրդայնացումը. 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագիրը:

ԲԱԺԻՆ 2. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ 1920 - 1945 ԹԹ.

Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը 1920 – 1922 թթ.:

Խորհրդային վարչակարգի հաստատումը, «Ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը: Փետրվարյան համաժողովրդական ապստամբությունը:

Խորհրդային Հայաստանը և Անդրկովկասի խորհրդային դաշնային հանրապետության ու ԽՍՀՄ ստեղծումը:

Խորհրդային Հայաստանի տարածքային հիմնախնդիրները (1920 - 1922 թթ.):

«Լոռու չեզոք գոտու», Զավախքի և Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրները: 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերը: Նախիջևանի հիմնախնդիրը: Զանգեզուրի հերոսամարտը (1920 թ. վերջ – 1921 թ. հուլիս), Գարեգին Նժդեհ:

Սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքը Խորհրդային Հայաստանում 1922 - 1941 թթ.:

Անցումը նոր տնտեսական քաղաքականության (նէպ), տնտեսության վերականգնումը: Խորհրդային Հայաստանի արդյունաբերացումը և գյուղատնտեսության կոլեկտիվացումը:

Կոմունիստական ամբողջատիրության հաստատումը, անհատի պաշտամունքը, քաղաքական բռնությունները և հալածանքները: Խորհրդային Հայաստանը՝ միութենական հանրապետություն, ՀԽՍՀ նոր Սահմանադրությունը:

Հայկական Սփյուռքի ձևավորումը:

Սփյուռքի առաջացումը: Հայկական հարցը Լոնդոնի 1921 թ. և Լոզանի 1922 – 1923 թթ. խորհրդաժողովներում: «Հայկական օջախի» և հայ գաղթականության խնդիրը Ազգերի լիգայում, Ֆ. Նանսեն: Հայրենադարձությունը 1920 - 1936 թթ.:

Հայ ժողովուրդը Երկրորդ աշխարհամարտի տարիներին:

Երկրորդ աշխարհամարտի սկիզբը: ԽՍՀՄ Հայրենական մեծ պատերազմը: Տնտեսության վերակառուցումը ըստ պատերազմական պահանջների: Հայերի մասնակցությունը պատերազմին: Հայկական ազգային դիվիզիաների կազմավորումը և նրանց մարտական ուղին: Սփյուռքահայերի մասնակցությունը ֆաշիզմի ջախջախմանը: Հայերի մասնակցությունը պարտիզանական պայքարին: Խորհրդային Միության հայ հերոսները և զորավարները: Պատերազմի ավարտը:

Խորհրդային Հայաստանի մշակույթը (1920 – 1945 թթ.):

Խորհրդային իշխանության քաղաքականությունը մշակույթի բնագավառում, անգրագիտության վերացումը: Կրթական համակարգի ձևավորումը, հանրակրթական դպրոցը, մասնագիտական կրթությունը: ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի հիմնադրումը և ՀԽՍՀ ԳԱ ստեղծումը: Բնական գիտությունները: Հայագիտությունը: Թատրոնը, կինոն, կերպարվեստը, երաժշտությունը: Քաղաքաշինությունը և ճարտարապետությունը:

ԲԱԺԻՆ 3. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ 1945 - 1991 ԹԹ.

ՀԽՍՀ տնտեսությունը, հասարակական-քաղաքական կյանքը:

Արդյունաբերության վերակառուցումը և զարգացումը: Գյուղատնտեսության հիմնախնդիրները: Բնակչության սոցիալական վիճակը:

Քաղաքական բռնությունների նոր փուլը: 1949 թ. զանգվածային աքսորը: ՀԽՍՀ-ն «ձնհալի» տարիներին: Ազգային զարթոնքը: Խորհրդային Հայաստանը «լճացման» տարիներին, այլախոհությունը:

Հայկական Սփյուռքը հետպատերազմյան շրջանում:

Հայկական հարցի վերաբացումը միջազգային նոր պայմաններում: «Մեծ հայրենադարձության» կազմակերպումը (1946 – 1948 թթ.): Սփյուռքահայերի պայքարը Հայկական հարցի լուծման և ցեղասպանության միջազգային ճանաչման համար:

Արցախյան շարժումը:

Գորբաչովյան վերակառուցման քաղաքականությունը: Արցախյան շարժման սկզբնավորումը: ՀԽՍՀ և ԽՍՀՄ ղեկավարության դիրքորոշումը: Սումգայիթյան ողբերգությունը: Համազգային շարժման ծավալումը: Հայերի բռնագաղթն Ադրբեջանից: 1988 թ. դեկեմբերի 7-ի երկրաշարժը: Համազգային շարժման հետագա վերելքը: Հայկական ինքնապաշտպանական ջոկատների ստեղծումը: Ազատագրական պայքարի զինված փուլը:

Հայաստանի Հանրապետության անկախության գործընթացը:

ՀԽՍՀ Գերագույն խորհրդի 1990 թ. մայիսի 20-ի ընտրությունները: Հայաստանի անկախության հռչակագիրը: ԽՍՀՄ - ի փլուզումը, ԱՊՀ - ի ստեղծումը:

Խորհրդային Հայաստանի մշակույթը 1945 - 1991 թթ:

Գիտությունը: Արվեստը. երաժշտությունը, թատրոնը, կինոն, կերպարվեստը: Ճարտարապետությունը:

ԲԱԺԻՆ 4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

Հայաստանի Հանրապետության ամրապնդման գործընթացը:

1991 թ. սեպտեմբերի 21-ի հանրաքվեն, ՀՀ անկախության հռչակումը: Իշխանության մարմինների ձևավորումը: Բանակը: Երրորդ հանրապետության խորհրդանիշները: ՀՀ Սահմանադրությունը:

ՀՀ հասարակական-քաղաքական կյանքը:

Բազմակուսակցական համակարգի ձևավորումը: Հասարակական և բարեգործական կազմակերպությունները: Ներքաղաքական զարգացումները 1991 - 1998 թթ.: 1999 թ. հոկտեմբերի 27-ի ահաբեկչությունը: Ներքաղաքական կյանքը XXI դարի սկզբներին:

ՀՀ միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը:

Հայաստանի Հանրապետության միջազգային ճանաչումը և դիվանագիտական կապերի հաստատումը: ՀՀ-ն ԱՊՀ-ի, ՄԱԿ-ի և Եվրախորհրդի անդամ, ՀՀ - Եվրամիություն հարաբերությունները: Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը:

Մշակութային կյանքը: Մշակութային կյանքի պայմանները: Կրթությունը: Գիտությունը: Գրական կյանքը: Արվեստը:

Հայկական Սփյուռքը 1991 թվականից մինչև մեր օրերը:

Սփյուռքի ստվարացումը, սփյուռքահայ համայնքները: Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները:

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՈՒՂԹ



202 թ. Միասնական քննություն

Պատասխանների ձևաթուղթ

Հայոց պատմություն

ազգանուն

անուն հայրանուն

ԳԹԿ անձնական համար

Եղե՛ք ուշադիր

• Լրացրե՛ք միայն սև գելային գրիչով: 0 1 2 3 4 5 6 7 8 9

• Թվերը գրե՛ք հետևյալ տեսքով

• Ընտրովի պատասխանով առաջադրանքներում և պնդումների փնջերում Ձեր ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դրե՛ք X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ):

0 3

Թեստ №

Ա մասնաբաժին — Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

Պատասխանի համարը

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20

21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34

Կարճ պատասխանով առաջադրանքներ

35 36 37 38 39 40 41 42 43 44

Ա Բ Գ Դ Ե

45 Պնդումների փունջ

1 2 3 4 5 6

Ճիշտ է

Սխալ է

Չգիտեմ

Բ մասնաբաժին — Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

46 47 48 49 50 51 52 53 54 55 56 57

Կարճ պատասխանով առաջադրանքներ

58 59 60 61 62 63 64 65 66 67

Ա Բ Գ Դ Ե Զ Է

68 69

70 Պնդումների փունջ

1 2 3 4 5 6

Ճիշտ է

Սխալ է

Չգիտեմ

Ամբողջ ձեռագրում սխալ նշված պատասխանները փոխելու տեղը

Ընտրովի պատ.

Պնդումների փունջ

Կարճ պատասխան

Լրացրե՛ք այս հատվածները՝

Շտեմարի եմ՝ քննությունն կարգալիս:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Պետական ավարտական և/կամ միասնական քննություն հանձնողները քննություններին նախապատրաստվելու են գրականության ցանկում տրված այն դասագրքերով, որոնցով իրենք համապատասխան դասարաններում ուսումնասիրել են հայոց պատմությունը: Դիմորդները կարող են նաև նախապատրաստվել երկու հեղինակային խմբերի դասագրքերով կամ նրանցից որևէ մեկի ստեղծած դասագրքերով՝ իրենց ընտրությամբ:

Ա. «Զանգակ» հրատարակչության 2018 թ. և 2019 թ. վերահրատարակած դասագրքեր

1. «Հայոց պատմություն», 6 -րդ դասարանի դասագիրք, «Զանգակ», Երևան, 2018:
2. «Հայոց պատմություն», 7 -րդ դասարանի դասագիրք, մաս 1, «Զանգակ», Երևան, 2019:
3. «Հայոց պատմություն», 7 -րդ դասարանի դասագիրք, մաս 2, «Զանգակ», Երևան, 2019:
4. «Հայոց պատմություն», 8 -րդ դասարանի դասագիրք, «Զանգակ», Երևան, 2018:
5. «Հայոց պատմություն», 9 -րդ դասարանի դասագիրք, մաս 1, «Զանգակ», Երևան, 2019:
6. «Հայոց պատմություն», 9 -րդ դասարանի դասագիրք, մաս 2, «Զանգակ», Երևան, 2019:

Կամ՝

Բ. «Մանմար» հրատարակչության 2018 թ. և 2019 թ. վերահրատարակած դասագրքեր

1. «Հայոց պատմություն», 6 -րդ դասարանի դասագիրք, «Մանմար», Երևան, 2018:
2. «Հայոց պատմություն», 7 -րդ դասարանի դասագիրք, մաս 1, «Մանմար», Երևան, 2019:
3. «Հայոց պատմություն», 7 -րդ դասարանի դասագիրք, մաս 2, «Մանմար», Երևան, 2019:
4. «Հայոց պատմություն», 8 -րդ դասարանի դասագիրք, «Մանմար», Երևան, 2018:
5. «Հայոց պատմություն», 9 -րդ դասարանի դասագիրք, մաս 1, «Մանմար», Երևան, 2019:
6. «Հայոց պատմություն», 9 -րդ դասարանի դասագիրք, մաս 2, «Մանմար», Երևան, 2019: